ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05.09 2022թ.
Ժամը 10[15]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԳՇ Ս և Չ ծառայության պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Սուջյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱՎ ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Դ. Մաթևոսյան:
Բացակայում է՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ Ս և Չ ծառայության ավագ սպա, փոխգնդապետ Ն. Սահակյանը;

Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ԳԿ վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ներսիսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս. Ներսիսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին, համապատասխան կազմած լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս. Ներսիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար չափման սարքերի և գործիքների մատակարարման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը

Հ/h	Մասնակիցների անվանում
1	«ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս. Ներսիսյան)

2.1 Մասնակիցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան իրական շահառուների մասին տվյալները՝ հավելված 1.3-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 05.09.2022թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: 07.09.2022թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը, մասնակցի կողմից ուղարկված շտկումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ս. Ներսիսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-16/3» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Ապրանքի անվանումը	չ/մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումը	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Չափման և հսկողության սարքեր/ Մոմենտային դարձակների ստուգաչափման սարք/	հատ	1	8 000 000	Հայտ չի ներկայացվել			
2	Օսցիլոգրաֆներ /Օսցիլոգրաֆ 50 ՄՀց/	հատ	4	1 100 000	Հայտ չի ներկայացվել			
3	Մակարդակի չափման սարքեր/ Հեղուկի մակարդակի էլեկտրոնային չափիչ սարք 3 մ խորության համար/	հատ	1	1 200 000	Հայտ չի ներկայացվել			
4	էլեկտրական պարամետրերի չափման գործիքներ /Հողանցման դիմադրության ստուգման աքցան/	հատ	1	1 160 000	«ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	1 137 000		1 137 000

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում է /ճիշտ է/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22--16/3» ծածկագրով ընթացակարգի 4-րդ. չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել մեկ մասնակից, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 12.09.2022թ. ժամը 12:15-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություն Մասնակցի հետ:

3.4 Նախատեսված բանակցությանը «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն չներկայացավ, արդյունքում վերջինիս կողմից առաջարկված գինը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա ««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22--16/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ս. Ներսիսյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 12. 09.2022թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22--16/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում՝ 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն:

4.2 ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22--16/3» ծածկագրով ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ, չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.3 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ չսահմանել, քանի որ ««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22--16/3» ծածկագրով ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել մեկ մասնակից: Հանձնաժողովը որոշեց հաստատել ««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22--16/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Խ. Սուջյան
Գնահատող	Դ. Մաթևոսյան
Գնումները համակարգող՝	Ս.Ներսիսյան